

Մ Մ Մ ՄՏԵՐԻՄ ԺՈՂՈՎՐԳԵԱՆ

Շաբաթը երկու անգամ
կը հրատարակուի :
Ստորագրութեան տեղն
Իմամ Ալի խան Վարի
յարկը թիւ 15



Տարեկան գինն է կանխիկ
դուրուշ 100 :
Դուրսերէն բաժանորդ
եղողները փոստային
ծախքը վճարաւու են :

ՅՈՒՂԻՄ 13

Գ. ՏԱՐԻ 1863

ԹԻԻ 20—24

ԷՄԷ ՄԱՐԴԷՆ

ԲՆՏԱՆՆԱՅ ՄԱՅՐԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ
ԹԻԻՆԸ

ԳՂՈՒԽ Թ.

ԲՆԿԵՐԱԿԱՆ ՍԱՆԴՈՒՂ :

Ուր որ ժողովուրդը բարը ունեցան ,
Թագաւորեցին : Պէրնարտէն տը Սէնրի-
էր . Զառ 'ի վերայ դաստիարակութեան կո-
կանց , էջ . 353 :

Բարբարոսութեան ժամանակները ,
կանայք ստրուկ կամ ծառայ են :

Քաղաքակրթութեան առաջին լու-
սաւորութեանը ծագած ատենը , եղան
տնաշէն , յետոյ մեր ընկերներն եղան :

Յետոյ ուրեմն , իրենց տուներէն
դուրս ելան , և ընկերակից եղան աշ-
խարհի իրենց հաճոյական տաղանդնե-
րովը , և իրենց արանցը զովոյ՜ իրենց
հանճարոյն զարգացմամբ :

Վերջապէս , երբ ընկերութիւնը ա-
ռանց կորսնցնելու իր սիրուն կերպերը ,
կատարեւազոյն . քաղաքակրթութեան
հասնելով մարդուս իրաւունքները ծանչ-
ցաւ , կինը տերութեան մէջ ալ տեղ ու-
նեցաւ , ուստի եղաւ միանգամայն սնա-

շէն , ընկեր և քաղաքացի . եղաւ ողջ
բովանդակ :

Այսպէս , ընկերութեան մէջ կանանց
բռնած տեղը՝ մեղի աշխարհիս քաղաքա-
կրթութեանը պատմութիւնը կ'ընծայե-
ցնէ , այսինքն՝

Վայրենի ժամանակներուն ,

Հոմերական ժամանակներուն ,

Յոյն և Հռոմէական հասարակասե-
տութեանց ,

Միջին դարուց ,

Լուսավիճութիւնի ժ. Գ. ի դարուն ,

Եւ մեր դարուն ,

որ է ժամանակ վերստին ծննդեան .
կանայք հոս իրենց պարտաւորութիւն-
ներն , իբրեւ դուստր , իբրեւ կին և իբրեւ
մայր , լոկ կատարելով՝ 'ի զլուխ իշխա-
նութեան պիտի վերանան :

ԳՂ . Ժ .

Այլը (էրեկը) կինը դաստիարակել
պարտի :

Սրտին խորին ախորժակներուն մէջ
սուրբ և առանձին շահէ ազատ բան մը
կայ որ մարդուս հոգւոյն առաւելութիւ-
նն ու արժանաւորութիւնը կը ցուցնէ :
Անսխլեան , Անճախութեան վրայ :

Մեր վերջնութիւնը զուտն , առանց երկբայութեան , բազմադիմի բողոքներու առիթ պիտի ըլլայ : Շատ մայրեր , դպրոցի խնամակալ կանանց շատերը , սրտմտելով որպէս թէ իրենց արհամարհութիւնը բաժնի , զիս պիտի ամբաստանեն թէ մոլորած եմ , զիս իբրեւ խարդախ ևս պիտի բամբասեն : Պիտի ցուցնեն մերթ այս մերթ տոյն ազատական դպրոցը , ուր աղջիկ տղաք , վարժոցներու (Գօլէթ) մանչ տղոց հաւասար ճարտասանութիւն և տրամաբանութիւն կ'սորվին և կրնան , եթէ հար կըլլայ , համալսարանաց ստորիճանն անցնիլ : Զիս անոնց գիտութեամբը պիտի ջախջախեն , անոնց տաղանդներովը շլացնեն , անոնց պատկերներն առջևս պիտի նետեն : Բայց աս բաներով ինչ ըրած պիտի ըլլան : Արդարեւ կարի անշան բան մը . պիտի ցուցնեն թէ աշակերտաց ունայնութենէն վեր բան մը եթէ կայ , ուսուցչաց և ծնողաց ունայնութիւնն է :

ձմարիտ է թէ կանանց հրահանգութիւնն ազնուազոյն եղած է , բայց աս հրահանգութիւնը մինչև ցայսօր ինչ արդատիք ունեցաւ : Աս տեսութեան վրայ կանկ առնենք :

Առաջին գիտողութիւնս ուսման եղանակին վրայ պիտի ըլլայ , այսինքն թէ ուսումն ինչ ճամբով աւանդել պէտք է : Կանանց ալ երիկ մարդու դաստիարակութեան դպրոցական կերպը տալով , կարծուեցաւ թէ կանանց դաստիարակութիւնը կատարեալ կ'ըլլայ : Մտաւանքը հոս է : Գալոցական կերպերը ուսուցչաց մեծ դիւրութիւն են , քանզի այնպէս մարդերու դժուարութիւնը չեն կրեր , ոչ ալ աշակերտաց հասկցնելու հարկ կը մնայ : Ուսուցիչը քանի մը բառով աշակերտին գիտութիւնը կրնայ արթնցնել , ինչպէս որ մարդ , զսպանակ մը միայն շարժելով , մեքենայ մը կրնայ շարժել : Աշակերտը , դպրոցական դրութեան մէջ , մեքենայ մըն է որ անուշներ թուականներ և դէպքեր կը կրկնէ : Հոս

կը տեսնեն որ տղայ մը դատում մը կը սորվի մանաւանդ քան թէ կը հասկնայ , թէ պէտ կը կարծուի թէ դատումն աշկերտին մոքէն է , ուստի և կը զարմանան որպէս թէ սքանչելիք կը տեսնենք :

Բայց և այնպէս աշակերտին հոգին իբրեւն է , բոլոր կարողութիւնները մոլորած կամ անծանօթ մնացած են . երեւակայութիւնը , յիշողութիւնը , բանաստեղծութիւնը , գեղեցիկին զգացումը , աս ամենը որ մեր երկնաւոր ուղեցոյցներն են , յիշողութեան մեքենական զարգացմանը տակ կը թմրին և կը մեռնին :

Մեր երկրորդ գիտողութիւնը բովանդակ ուսման իւրութեան վրայ պիտի դառնայ : Մանկամարդ աղջիկ մը կ'ամուսնանայ . մեր և անոր երջանկութիւնն ապահով ընելու համար անոր ինչ սորվեցուցինք , կամ ինչ սորվեցնել պարտ էր : Աս խնդիրը պարզ է , սակայն նոր խնդիր է : Գոնէ այնպէս կը թուի թէ ոչ ոք իր մտացը մէջ աս խնդիրը յուզեց , քանզի ոչ ոք զայն լուծել կամեցաւ : Աս խնդիրը լոյս մըն է որ մեր դաստիարակութեան բոլոր ճառերուն մէջ կը պակսի , ես աս լոյսն առ դրբին բոլոր էջերուն մէջ սրիռել կը փափաքիմ :

Մենք մեր աղջիկներն ունայնութեան և անմեղութեան մէջ կը մտնցանենք . յետոյ կուտանք զանոնք երկան մը որ անոնց անմեղութիւնը կ'եղծանէ և ունայնութիւնը կը մշակէ : Այսպէս ունայնութիւնը միայն կը մնայ , և անոր դործունէսը ու ձախող պաշտօնն ան ատեն կը ըսկըսի : Ունայնութիւնը կնկանը կ'ըսէ . « գեղեցկութիւնդ սոյս (ծառայութիւն) ընդունելու արժանի է . երջանկութիւնը գեղեցկութեան մէջ է . հարստութիւնն ամեն բան , պատիւ , յաջողութիւն , կուտայ . ուստի պարտ է հարստութիւն ըստանալ » : Ինչ որ ունայնութիւնը կը թելադրէ , կնիկ մարդը կ'առնայ և երիկ մարդը կը կատարէ . այս է աշխարհի ընթացքը : Հանգիստ , առողջութիւն , խիղճ անդամ անոր կը զսուի . մարդ

մաստունն անտեսութեան մը սրբաբանացը քով ուրիշ հարկեր ալ կան, աշխարհիս հարկերը : Ժամանակները փոխուելով՝ մեր տեսչութիւնն ալ փոխուած է . հիմա մենք ուրիշ վախճաններու սահմանուած ենք . աս է զոր տեսնել չեն ուզեր անոնք որ արդի բարուց չեն հաւնիր, և միշտ կը գանգատին թէ հին գոթացի բարքերը, կամ նահապետական առաքինութիւնները ջնջուեցան : Աս բարի մարդիկը տակաւին չեն գիտեր թէ Լուտովիկոս ԺԳ . ին դարը՝ ընտանեաց իրարմէ զատուած ըլլալը վերցուց, և փոխանակ ընդ այնր՝ ընկերական կեանքը դրաւ, կամ ուրիշ բառերով ըսինք սրահներու կեանքը (չա՛ քի առաջ) : Այսպէս աղերսները (յարաբերութիւնները) բազմացան, կերպերը քաղցրագոյն եղան, նոր պարտաւորութիւններ մտան որոնք հին պարտաւորութիւնները փոխեցին, և ասոնց ամենէն ելաւ աւելի կատարեալ քաղաքակրթութիւն մը՝ որուն մէջ կանանց գործըն է օրէնսդրի պաշտօն կատարել իրենց ազգեցութեամբ որուն հակառակ կալանահար է . ազգեցութիւն ջերմ և կաթողին՝ զոր իրենց արանցը և որդւոցը վրայ կը վարեն : Էրիկ մարդուն բոլոր կարծիքներն ընտանեաց մէջ կը ծնանին և կը յորինուին :

Բարին աս է . չարն ալ տեսնենք : Ան ընտանեկան տեսարանը զոր Քսենոփոն յառաջ կը բերէ, Էրկան վրայ առաքինութիւն կը դնէ, իսկ կնոջ վրայ անգիտութիւն և խոնարհութիւն . մեր դաստիարակութիւններն ասոնց և ոչ մին կուտան, ոչ առաքինութիւն, ոչ խոնարհութիւն :

Բայց մենք Քսենոփոնին օրինակին վրայ չենք կրնար յիշուլ, նա՞ մանաւանդ կ'ըսենք թէ կնոջ մարդու համար ամենէն վտանգաւոր ժամանակն ան է՝ երբ Էրկանը կիրքերն անոր սրտին մէջ կը սարդին և անոր բնածին բարքը կը զարթուցանեն : Եթէ ան կիրքերն ազնուականութենէ կամ լաւութենէ անմասն

են, եթէ կնիկ մարդն իր անմեղութենէն ուրիշ զենք չունի, կորսուած է : Սորվածներէն բան մը քնա չի կրնար փրկել . առանց կռուելու կը յաղթուի, առանց իր վատութիւնը ծանօտելու կը վատթարանայ : Ըսէք ուրեմն . անմեղութեան զօրութիւնը ո՞րն է . ըսէք, դուք որ այնչափ տարիէ 'ի վեր անմեղութեան զօրութիւնը՝ զգայութեանց, ընդունայնութեան և ընչեղութեան հրապուրանացը դէմ իբրեւ դարման կը դնէք :

Ան դաստիարակութիւնը՝ զոր արանց մեծ մասն իրենց կանանցը կուտայ, տեսարան մի է զոր ես հոս բոլոր մարց աչուրներուն առջևը դնել կ'ուզեմ : Ան փորձ և անգէտ մանուկ աղջիկը զոր դուք մարդու մը կու տաք որ աղջկանը դրեթէ անծանօթ է, ան մանուկ աղջիկը, կ'ըսեմ, եթէ գեղեցիկ է, քանի մը ժամու մէջ հարստակութենէ իշխանութեան կ'անցնի, հոգւոյ հանդարտութենէ՝ ըզգայութեանց մոլեգնութեանը : Այն անոր գգուանօքը կ'արբենայ (գինոքալ) կ'ըլլայ տարփածու, նախանձատ, մոլեգին . այնուհետեւ կնոջն անմեղութիւնը և բոլոր ախորժակները ջնջելու, անիկայ աշխարհէն, մօրմէն ևս զատելու միանգամայն պիտի ջանայ : Աս ջանքը կ'ընէ մոլեգնութեամբ, առանց խորհելու թէ ըրած քնասը միանգամայն իր անձին է : Եւ անոր որով արբեցեալ է, և որ անոր միտքը խռովեցուցած է անոր վրայ այլանդակ և խելագար կիրքեր կ'երևցնէ, կընոջը համար զինք կ'օրծանելու, կեանքն ու պատիւն անոր համար տալու պատրաստ է : Անն անոր ընկերը չէ, այլ կուռքը, տարփաւորը . Օբերայի աղջիկ մը՝ զոր կաշմիրներով կը զգեցուցանեն, կ'արհամարհեն, կը սիրեն, կը վճարեն, և անով կը յաղենան : Մանկամարդը որ աս գաղանական կրից մէջ իրեն եղած արհամարհութիւնը չտեսներ, իր յաղթանակին վրայ կը ժպտի, և սրտին մէջ ծնած սաստիկ յուզմանց արագ արագ կը սովորի :

րէն ստանալ կ'ուզէ . կը փնտռէ իր ան-
ձին կէտը զոր կը յուսար թէ գտաւ վեր-
ջապէս , երկանը ձեռքը սկսած ապակա-
նութիւնը՝ տարփածուի մը բազուկնէ .
ըսեն մէջ կատարեալ կ'ըլլայ :

Այսպիսի պատկեր մը նկարելէ ետքը ,
հարկ է արդեօք տակաւին ըսել թէ , ոչ
եթէ այլը կնոջը վարդապետ ըլլալու է
այլ այլը կնոջը ձեռքով վերստին նորո-
գել պէտք է : Ապա ինչ ընել պէտք է :
Կանանց իրենց արժանապատուութեանը
զգալ սորվեցնել . և ուսուցանել որ ճշ-
մարիտ սէրը՝ սիրոյ անունը յափշտակող
մոլեգնութենէն օրոշել զիտնան : Առա-
ջին կէտը կը կայանայ յայնմ՝ որ կինը սի-
րելի և մեծարոյ ըլլալու ջանայ . ամենե-
ւին յանձն չառնու ընել՝ ինչ որ երիկ
մարդուն անասնական ախորժակները կը
պահանջեն որ ընէ . վերջապէս ճանչնայ
թէ երիկ մարդոց իրեն տուած պա-
տիւններուն մէջ անարդանք կայ , քան-
զի ան պատիւներն են որ կնիկ մար-
դը երիկ մարդուն հաճոյիցն ու հեշտու-
թեանց գործիք կ'ընեն : Կը համարձա-
կիմ ըսել թէ քաղաքակրթութիւնը չի
կրնար յառաջագիմութիւն ընել մինչև որ
կանայք չամօքնեն մեզ՝ որ զանոնք քանի
մը ցած և խոշոր (Գապա) բաներու հեշ-
տութեան հետ հաւասար և նման ըրած
ենք , ինչպէս որ սովորութիւն է շատ
անգամ իբրև ի բանից կարգի ըսել . Կի-
նի , սեղան , կանայք և ձի : Ս'բան զը-
ուարճութեանց տխուր աստիճաններ ,
ուր մարդ անպատիւ կ'ընէ արդանոր որ
զինք կրեց :

Բայց կանայք մեզ ինչպէս պիտի ա-
մրչցնեն , եթէ նախ իրենք չպատկա-
ռին : Պէտք է որ մանուկ օղջիկ մը փա-
փուկ զգայուն միտք ունենայ , և նոյն ա-
նոր պատկառանացը լոյսն ըլլայ . նոյն
զգայուն միտքը մանկամարդ կնոջ վրայ
ալ կնոջ արժանապատուութիւնն ա-
նոր ճանչցնէ : Ոչ թէ կեղծ զգաստու-
թեան մը ձևերը , այլ ճշմարիտ առա-
քինութիւն կը պահանջէմ : Հրապուրուի-

լը դժուարին ընելով , սէրն աւելի կա-
տարեալ և աւելի մաքուր ընել կ'ուզէմ .
առաքինութեան կ'ուզէմ թողուլ ան
պատրանքները որ մեր երիտասարդու-
թիւնը մոգեւու կուգան , և ամենէն ա-
ռաջ մեզ գեղեցկութեան և անսահմա-
նութեան աշխարհը կը մուծանեն :

Աղջկանց դաստիարակութիւնը այս-
պէս ըլլալու է : Այնուհետեւ երկան
դաստիարակութեանը վրայ խորհել հաշի-
չէ . երիկ մարդուն դաստիարակութիւ-
նը կնկան առաքինութիւններուն ձեռքո-
վը՝ պարզ և բնական կերպով կը կա-
տարուի :

(Դարձնակէտ)

Ս. Մ. Գ.

Հետեւեալ նամակին ընթերցողաց
ուշադրութիւնը կը հրաւիրենք :

Արդոյ խմբագիր :

Գուք որ ժողովրդեան մտերմն հանդի-
սանալու եւ անոր ձայնը ընդհանրութեան
հրատարակելու պաշտօնն էք հաղած կ'ա-
ղաչեմ Հայկայ թշուառ սերունդին աղէկը-
տուր ձայնը համայն հայորեոյն սրտին մէջ
ձեր աղնիւ թերթին միջոցաւ թնդացնելու
չնորհն ընէք :

Թատուրաք գեղը որ Սեփաստիոյ շրջակայ
գեղերէն մէկն է անտանելի նեղութեան են-
թակայ եղած է իր քաղաքակից հարստա-
հարողաց ձեռքէն :

Շատ ժամանակ չընէր այս գեղէն աղ-
գային վարչութեան աղերսագիրներ ուղղել-
նիս , նա մանաւանդ խիստ ստիպողական
պատճառով մը հեռագրութեան թեւերով
ալ՝ մեր տարաբաղդութենէն թէ՛ մտիկ ընե-
լու ականջ չմնալէն՝ չեմ գիտեր , մինչեւ
ցարդ անլուղ եղած են մեր ձայնին , նոյն իսկ
Մատիսի պատուական խմբագիրը (որ կ'ա-
մաչեմք ասել) աղգային սրտօնական ձայ-
ներու արձագանքը պիտի ըլլայ , մեր դժբաղդ
վիճակին վրայօք լուր մ'անգամ Հոյ հասա-
րակութեան չէ դեկուցած մինչեւ ցարդ ,
« Գժքաղտութիւնն իրեն բարեկամ չունի » :
Թէպէտ բայց ուր ժողովրդեան մը ցաւերն
այն աստիճան կը սաստիկանան որ իրենց յեր-

Ա. Զ. Դ.

Թաղական խորհուրդն իր ամբողջութիւնը գտնելէն անմիջապէս ետքը իր պարտականութիւնն է մէկ կողմէն Սահմանադրապէս իրեն յանձնուած պաշտօնը կատարել, եւ միւս կողմանէ Երեսփոխանական ընտրութեան ձեռք զարնել :

Բայց՝ որովհետեւ Երեսփոխանական ընտրողը երկու կարգ անձինք պիտի ըլլան, Ա. դռնէ 75 ղուրուշ տարեկան ազգային ընդհանուր տուրք վճարողը, Բ. Ընտրողութեան անձնական արժանիք ունեցողները. (Սահ. Յօդ. 65) ուստի Գործադիր Յանձնաժողովոյ հրահանգին համեմատ Ընտրողական ժողովս ուրոշեց որ Երեսփոխանական ընտրողութեան արժանաւոր ճանչցուած անձանց հրաւեր գրելով իրենց իրաւունքն ու պարտականութիւնը յիշեցնէ. այսինքն՝ 75 ղուրուշ կանխիկ վճարողէն ստանին առնել, եւ փոխարէն անոր անդորրագիր տալ. կամ 75 ղուրուշ կանխիկ չի վճարող աւելլայ նէ ստորագրութիւն մ'առնել որչափ ատենէն վճարելիքը նշանակելով :

Երեսփոխանական ընտրողը այս կերպով ընտրուելով անոնց թուոյն համեմատ Երեսփոխան պիտի ուղուի թաղէս, այսինքն որչափ քիչ ընտրող ըլլայ, այնչափ քիչ Երեսփոխան, եւ որչափ շատ ընտրող, նոյնչափ շատ Երեսփոխան պիտի ուղուի :

Ուստի ընտրողաց թիւը առանց ճիշդ որոշուելու Երեսփոխանական ընտրութիւն չի պիտի կրնայ ըլլալ, որով Ազգն իր կեդրոնական վարչութիւնը խիստ ուշ հաստատելու պիտի հարկադրուի : Ասոր հետեւութիւնը ինչ աստիճան ցաւալի ըլլալը ամեն ընթերցող բարեսէր Ազգայինք կրնան գուշակել, որուն պատճառը նոյն իսկ Սահմանադրասիրաց անհոգ վարմունքը կամ զանցառութիւնը պիտի ըլլայ :

Արդ. կը յորդորեմք ազգասիրաբար ամեն անոնք՝ որոնց որ հրաւերի նամակ դացած է, նոյնը առանց զանցառութեան գործադրելու :

Գործին մէջ ամենեւին դժուարութիւն մը չի կայ. պահանջուելիքը հիմա կու հիմայ ուրիշ բան չէ, բայց եթէ կամ 75 ղուրուշ, եւ կամ 75 ղուրուշի ստորագրութիւն մը ուշ կամ կանուխ պայմանաժամով :

Ուստի դարձեալ կը խնդրեմք բոլոր հրաւեր ընդունողներէն որ բարեհաճին զիրար համողելով ժամ յառաջ յիշեալ պարտականութիւնն իր կատարելու մինչեւ յառաջիկայ ուրբաթ կամ կիրակի օր խորհրդարանս ներկայանալով, որպէս զի ընտրողք՝ իրենց զանցառութեամբը չըլլայ որ՝ Ազգին կեդրոնական վարչութեան ուշ հաստատուելուն պատճառ ըլլան որով եւ Ազգին, Եկեղեցւոյ, դպրատան, տնանկաց, մանաւանդ Ազգայնոց գործերը ընտրողաց պարտականութեան կատարմանը չըսպասեն :

Կիմայնեմք նաեւ որ՝ Ազգը կարողութիւն ունեցող անհատներէն այս ըստակը հիմա ալ ետքն ալ պիտի պահանջէ եւ պիտի առնէ (Սահ. Հիմ. սկզբ. Գլ. Բ. եւ Յօդ. 90), ուստի ընտրողք իրենց զանցառութեամբը չէ թէ պարտականութենէ ազատ պիտի ըլլան. այլ Ազգին բարոյապէս մեծ փնաս մը պիտի տուած ըլլան որն որ երբէք չի յուսացուիր ճշմարիտ ազգասէրներէ :

9 Յուլիս 1863

Խորհրդարան Սամաթիոյ :

Ա. Խենապետ

Ընտրողական Ժողովոյ Սամաթիոյ
ԱՌԿ ԳԵՈՐԳԵԱՆ :

ԽՄԲԱԿԻՐ—ՏՆՕՐԷՆ

Ա. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ